ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երևանի պետական համալսարանի
Հումանիտար և հասարակագիտական
մասնագիտությունների գծով
պրոռեկտոր՝
Է. Ասրիյան

«11» հոկտեմբերի 2021

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տիգրան Ռազմիկի Մանուկյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիները (ՀՀ խմիչքների արտադրության նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Քննարկմանը մասնակցում էին՝ «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մնացականյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ. Թ. Հովակիմյանը, տ.գ.թ., ասիստենտ Ռ. Ալեքսանյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Շուկայական լարված մրցակցության պայմաններում ձեռնարկատիրական սուբյեկտների և առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության վերաբերյալ ամբողջական, հուսալի և օբյեկտիվ տնտեսական տեղեկատվության ստացմամբ հետաքրքրված են շուկայի մասնակիցների լայն շրջանակներ:

Այդպիսի տեղեկատվության հիմնական աղբյուրը կազմակերպության հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններն են, որոնց վերլուծության արդյունքների հիման վրա շուկայի մասնակիցները որոշում են հաստատել գործարար հարաբերություններ:

Այս առումով, ժամանակակից բիզնեսը, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին օգտագործողների կողմից առաջ է քաշում հաշվետվերլուծական տեղեկատվությանը ներկայացվող շատ խիստ պահանջներ: Բիզնեսի կազմակերպման և տնտեսական միջավայրի անընդհատ փոփոխվող պայմանները պահանջում են ոչ միայն տնտեսվարման սկզբունքորեն նոր մեթոդների ներդրում, այլ նաև կազմակերպության հաշվապահական և վերլուծական ծառայությունների մասնագետների կողմից իրականացվող հիմնական գործառույթների էության և բովանդակության վերաբերյալ տեսակետների փոփոխություն՝ ուղղված կազմակերպության երկարաժամկետ

համաչափ և եկամտաբեր գործունեությանը: Այս գործառույթների թվին է դասվում նաև ֆինանսական վերլուծությունը:

Հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների հիման վրա կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդաբանության բարելավման անհրաժեշտությունը, վերլուծական աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ առանձին ոլորտների և կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների անտեսումը վկայում են ֆինանսական վիճակի վերլուծության մեխանիզմի տեսական, մեթոդաբանական և գործնական մոտեցեումների արդյունավետ համակարգի մշակման անհրաժեշտության մասին:

ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում նշված կարևոր հիմնախնդիրների գիտական հետազոտմանը և լուծումների մշակմանն ու առաջադրմանն է ուղղված Տ. Մանուկյանի ատենախոսությունը, ինչը ընդգծում է թեմայի արդիականությունը և հետազոտության արդյունքների կիրառման կարևորությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է ՀՀ ոգելից խմիչքների ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի վերլուծության և ախտորոշման տեսական եւ մեթոդաբանական հարցերի կատարելագործումն ու այդ ուղղությամբ գործնական առաջարկների կատարումը: Առաջադրված նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները, որոնք պայմանավորել են հետազոտության տրամաբանությունը և կառուցվածքը.

- նորմատիվ իրավական ակտերում, հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններում ֆինանսական վիճակի վերլուծության վերաբերյալ առկա մոտեցումների, տեսակետների, հայացքների և «ֆինանսական վիճակի վերլուծություն» կատեգորիայի ըմբռնման սկզբունքների բազմակողմանի ուսումնասիրություն և քննադատական գնահատական,
- ֆինանսական վիճակի վերլուծության հայեցակարգային ապարատի ուսումնասիրություն և հստակեցում, ֆինանսական վիճակի վերլուծության գործող մեթոդաբանությունների առավելությունների ու թերությունների բացահայտում և ֆինանսական վերլուծության իրականացման կառուցվածքային-տրամաբանական ալգորիթմի մշակում, որը հիմնվելով ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում գործող ավանդական ալգորիթմի հիմնական սկզբունքների վրա, միաժամանակ հաշվի կառնի ժամանակակից հայաստանյան տնտեսության առանձնահատկությունները,
- միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվների համակարգի վերլուծություն և տնտեսվարման արդի պայմաններում ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների համար ֆինանսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքների ընդունելի մակարդակի հաշվարկման մեթոդաբանության մշակում,
- ընթացիկ իրացվելիության գործակցի, շրջանառելիության ցուցանիշների և հաշվեկշռի իրացվելիության մակարդակի գնահատման մեթոդաբանության

կատարելագործում,

- ցուցանիշների ձևավորած համակարգի և դրանց արժեքների ընդունելի մակարդակների հաշվարկների հիման վրա ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող համապարփակ ինտեգրալ ցուցանիշի կառուցում, որը կազմակերպությունների ֆինանսական վիճակը կգնահատի տարբեր կողմերից և կտա գործնական վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունն ու ֆինանսական վիճակն է, իսկ առարկան՝ նշված ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման արդյունավետ համակարգի ձևավորման հետ կապված տեսական, մեթոդաբանական և գործնական խնդիրների ամբողջությունը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը տեքստը շարադրված է 161 էջի վրա /առանց հավելվածի/, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական արդյունքներն ու նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության տեսական-մեթոդաբանական հիմքերը» գլխում հեղինակը՝ ֆինանսական վիճակ կատեգորիայի միջազգային և հայրենական փորձի և հետազոտողների տարբեր տեսակետների բազմակողմանի ուսումնասիրության ու ընդհանրացման հիման վրա, ձևակերպել է արտադրական ձեռնարկության ֆինանսական վիճակի և ֆինանսական կայունության հեղինակային սահմանումներ: Այս գլխում, կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության վերաբերյալ առկա մեթոդաբանությունների հետազոտության արդյունքում ատենախոսը իր տեսակետն է ներկայացրել այդ մեթոդաբանությունների առավելությունների ու թերությունների վերաբերյալ և մշակել է ֆինանսական վերլուծության իրականացման կառուցվածքային-տրամաբանական ալգորիթմ, որի հիմքում դրվել է ժամանակակից հայաստանյան տնտեսության և առանձին ոլորտների գործունեության առանձնահատկությունները:

Ատենախոսության 1-ին գլուխն ամփոփվում է արտադրական կազմակերպությունների ֆինանսական վիճակի վատթարացման պատճառների համակարգման հիմնական մոտեցումների ներկայացմամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների համակարգի և դրանց նվազագույն բավարար արժեքների սահմանման մեթոդաբանության մշակումը» գլխում ատենախոսն անդրադարձել է սեփական ընթացիկ ակտիվների հաշվարկի հետ կապված գիտական տարաձայնություններին և հիմնավորել է, որ

սեփական ընթացիկ ակտիվներ և զուտ ընթացիկ ակտիվներ ցուցանիշները բացարձակապես տնտեսագիտական տարբեր իմաստ ունեն: Այստեղ իրականացվել է զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն բավարար արժեքի հաշվարկ: Այս գլխում ատենախոսը առաջարկել է նաև ընթացիկ իրացվելիության նվազագույն (բավարար) և նախընտրելի մակարդակների գնահատման մոտեցումներ: Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում, ֆինանսական կայունության բազմաթիվ ցուցանիշների համադրման հիման վրա, ատենախոսն առանձնացրել է չորս ցուցանիշներ, որոնք ըստ իրեն ունեն համապարփակ կիրառություն՝ անկախ գործունեության ուղղվածությունից և ակտիվների ու պասիվների կառուցվածքի բնույթից: Գնահատվել է կոնկրետ կազմակերպության համար ընթացիկ ժամանակահատվածում սեփական կապիտալի անհրաժեշտ (բավարար) մեծությունը, որի հիման վրա էլ հաշվարկվել է ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշների նվազագույն բավարար մակարդակները:

Ատենախոսության երրորդ՝ «Կազմակերպությունների ֆինանսական վիճակի գնահատման կատարելագործման ուղիները» գլուխը ներառում է երեք ենթագլուխ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է նորույթի մեկ կետ: Այս գլխում ատենախոսն առաջարկել է կազմակերպությունների վճարունակության գնահատման այլընտրանքային մոտեցում, որն ուղղված է կազմակերպությունների վճարունակության գնահատման կատարելագործմանը և որը հիմնված է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության համադրելիության սկզբունքի վրա:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ատենախոսն առաջարկել է հաշվեկշռի իրացվելիության գնահատման նոր մոտեցում, որը հիմնված է մատրիցային հաշվեկշռի բարելավված տարբերակի կառուցման մեթոդական ցուցումների վրա: Մատրիցային հաշվեկշիռների տվյալների հիման վրա ատենախոսի կողմից առաջարկվել է ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակի խախտման երեք իրավիճակ և առանձնացվել է ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության չորս աստիճան:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում ֆինանսական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշների արժեքների՝ աշխատանքի երկրորդ գլխում հաշվարկված նվազագույն բավարար մակարդակների հիման վրա ատենախոսն առաջարկել է ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների ամփոփ ինտեգրալ ցուցանիշների կառուցման մեթոդաբանություն: Մշակված մեթոդաբանությամբ ստացված ինտեգրալ ցուցանիշների առավելությունները կայանում են նրանում, որ հաշվի են առնում ինչպես ոլորտի առանձնահատկությունները, այնպես էլ առանձին վերլուծվող կազմակերպությունների ակտիվների և պասիվների ձևավորված կառուցվածքը:

Ատենախոսության **«եզրակացություններ»** բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

• առաջարկվել է ֆինանսական վիճակի վերլուծության բարելավված կառուցվածքային սխեմա, որում հաշվի են առնված ազգային տնտեսության զարգացման մակարդակը, առանձնահատկությունները, հայկական ընկերություններում ֆինանսական վերլուծության ավանդական ալգորիթմի կիրառման առումով առկա խնդիրները, և որը հիմնված է կազմակերպությունների ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների նվազագույն բավարար ու նախընտրելի արժեքների գնահատումների վրա,

• առաջարկվել է կազմակերպությունների վճարունակության գնահատման այլընտրանքային մեթոդաբանություն, հիմքում դնելով ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերածվելու ժամանակաշրջանի և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը,

• մշակվել է մատրիցային հաշվեկշռի տարբերակի կառուցման բարելավված մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս գնահատելու կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը քառաստիճան մոտեցմամբ,

• մշակվել են ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների համապարփակ ցուցանիշներ, որոնք կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատում են բազմագործոն մոտեցումներով և տալիս են գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել ֆինանսական վիճակի վերլուծության վերաբերյալ հայ և օտարերկյա հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները, օրենսդրական ու նորմատիվ իրավական ակտերը, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերը, ուսումնասիրված կազմակերպությունների ֆինանսական և կառավարչական հաշվետվությունները, հետազոտության թեմային վերաբերող գիտական հրապարակումները, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները:

Հետազոտությունում առաջարկված մոտեցումները, մեթոդները, վերլուծական եզրակացությունները, առաջարկություններն ու արդյունքները կարող են գործնական լայն կիրառություն գտնել արտադրական ձեռնարկությունների կողմից իրենց և գործընկեր կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության, այդ վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսի կողմից աշխատանքում ներկայացվել է տեսակետ, որի իմաստը հանգում է հետևյալին. եթե ներդրումների արդյունքում ցուցանիշները իջնում են կրիտիկականից ցածր մակարդակի, ապա պետք է կրճատել ծրագրի մասշտաբները, դրա իրականացման ծախսերի կրճատման ուղղությամբ» (37-րդ էջի վերջին պարբերություն): Մեր կարծիքով այս տեսակետը հստակեցման կարիք ունի այն առումով, որ եթե խոսքը գնում է արդեն իսկ իրականացված (սկսված) ծրագրի մասին, ապա մասշտաբի կրճատման կամ ծախսերի կրճատման հնարավորություն գուցեն չլինի:
2. Աշխատանքը խիստ ծանրաբեռնված է հավելվածներով և հեղինակը շատ հաճախ քննարկումների համար որպես հիմք է վերցնում հենց հավելվածներում առկա տեղեկատվությունը: Կարծում ենք իմաստ չուներ նման ծավալի հավելվածների ներառումը աշխատանքում, քանի որ հաշվարկների մեթոդաբանություններն ու ալգորիթմները արդեն իսկ բուն հետազոտության նյութում ներկայացված էին, և կարելի էր 1-2 օրինակով հիմնավորել այն և չներառել բոլոր կազմակերպությունների և բոլոր տարիների հաշվարկները: Մասնավորապես հավելված 15-ը (ստատիկ և դինամիկ մատրիցային հաշվեկշիռներ) ներկայացված է հավելվածներ բաժնի 49-116 էջերում: Մեր կարծիքով հավելվածների նման մեծ ծավալը (157 էջ) բարդացնում է աշխատանքի ընթերցումը և ընկալումը:
3. Մեր կարծիքով, դինամիկ և էմպիրիկ վերլուծության առումով աշխատանքն ավելի հարուստ կլիներ, եթե ներառեր մակրոտնտեսական վերլուծություն ՀՀ խմիչքների շուկայի կառուցվածքի, ծավալների, ընտրանքում ներառված ընկերությունների շուկայում ունեցած կշիռների վերաբերյալ:
4. Աշխատանքում բացակայում է միջազգային փորձի մասով քննարկումը: Մեր կարծիքով աշխատանքը կհարստանար, եթե ատենախոսը ներկայացներ, թե նմանատիպ ընկերությունների կամ առաջատար ընկերությունների մասով, աշխատանքում առաջարկված դրույթները ի՞նչ արդյունքներ կարող էին տալ և որքանո՞վ են հայկական ընկերությունների արտահանվող ապրանքատեսակները մրցունակ ոգելից խմիչքների միջազգային շուկայում: Այս առումով վստահ կարելի է ասել, որ հետազոտության գիտական և գործնական նշանակությունն ավելի կարժևորվեր, եթե ատենախոսի կողմից ներկայացվեին այն մոտեցումներն ու ցուցումները, որոնք հնարավորություն կտային աշխատանքում առաջարկված արդյունքները ՀՀ խմիչքների արտադրության ոլորտից բացի կիրառել նաև այլ ոլորտներում և միջազգային վերլուծական պրակտիկայում:
5. Էջ 79-ի բանաձևեր 2.3.7-ի և 2.3.8-ի հիման վրա կատարված հաշվարկները վկայում են վերլուծվող բոլոր ընկերություններում առկա խնդիրների մասին մոտ 2010-2020 տարիների համար, սակայն այդ ընկերություններից և ոչ մեկ լուրջ խնդիրներ կարծես թե չի ունեցել այդ տարիներին (ամեն դեպքում հեղինակը չի հիշատակում): Մեր

կարծիքով հեղինակի կողմից նշված բանաձևերի հիման վրա ստացված արդյունքները լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը: Տ. Մանուկյանի ատենախոսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում արտացոլված են ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության առկա խնդիրները և առաջարկված են այդ վերլուծության կատարելագործմանն ուղղված տեսական և գործնական կարևոր դրույթներ: Ատենախոսը հանդես է բերել մասնագիտական և վերլուծական անհրաժեշտ գիտելիքներ, ինչի մասին են վկայում հետազոտությունում ստացված արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակված են թվով 8 (ութ) գիտական հոդվածներում: Մեղմագիրը համապատասխանում ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հետազոտության կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Տիգրան Ռազմիկի Մանուկյանի **«Ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիները (ՀՀ խմիչքների արտադրության նյութերով)» թեմայով** պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակը արժանի է նշված մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ,
տ.գ.դ. պրոֆեսոր՝ Հ.Գ. Մնացականյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ
տ.գ.թ.՝ Գ. Է. Սահակյան

Ստորագրությունները հաստատում եմ
ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.թ. Լ.Ս.Հովսեփյան